

Հ ա շ Վ Ե Տ Վ Ո Ւ Յ Ո Ւ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարանի **2014 թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը** կատարած աշխատանքների վերաբերյալ.

Ընթացիկ ժամանակահատվածում անցկացրել ենք ավագանու իննը նիստ, կայացրել ենք որոշումներ, պատասխանել դիմումներին և գրություններին:

Վճարել ենք գյուղապետարանի աշխատողների աշխատավարձը, չունենք սոց. վճարների և աշխատավարձի պարտքեր, իսկ խնայված միջոցներից մեկ ամսվա աշխատավարձի չափով պարգևատրել ենք համայնքային ծառայողներին:

2014 թվականի ընթացքում հողի հարկի հավաքագրման ցուցանիշը հասցրել ենք 93.2%, իսկ գույքահարկինը 105.8%, վարձակալական հողի վճարը 94.6%:

Նախորդ տարվա համեմատ հարկերի հավաքագրման տոկոսի ցածր լինելը պայմանավորված է 2013թ-ի կարկուտի հետևանքով առաջացած գերավճարներից, որը 2014թ-ին չի հաշվարկվել:

2014թվականին սկսվել է դպրոցի վերանորոգման աշխատանքները, որտեղ իր ներդրումն ունի նաև համայնքը 2.147.059 /երկու միլիոն հարյուր քառասունյոթ հազար հիսունհինգ/ դրամ և ավարտվել է նոյեմբերի սկզբին, իսկ բացումը կատարվել է նոյեմբերի 14-ին:

2014թվականին կազմակերպված ձևով գյուղապետարանը նպաստել է համայնքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

2014թվականին «ԽՈՅ» ջրամատակարար ընկերությունը համայնքը ապահովել է մշտական ոռոգման ջրով, իսկ գյուղապետարանը աջակցել է վարձավճարների հավաքագրմանը:

2014 թվականին գյուղապետարանի աջակցությամբ համայնքի բազմաթիվ ընտանիքներ օգտվում են «Հայգյուղփոխբանկի» վարկային ծրագրերից:

2014 թվականին ջրմուղ կոյուղու աշխատակիցների կողմից կատարվել է համայնքի խմելու ջրի ցանցի ուսումնասիրություն, սակայն խնդիրը մնում է դեռ չլուծված:

Խմելու ջրի հարցը այսօր դարձել է օրհասական, որի համար համայնքի ղեկավարը և ավագանին դիմել են վարչապետին խնդրի լուծման նպատակով:

Չնայած համայնքի առջև ծառայած կարևորագույն կենսական խնդիրները իրենց լուծումն են ստանում, բայց դեռ կան չլուծված հարցեր, ինչպիսիք են միջհամայնքային ճանապարհը, որը միշտ էլ եղել է գյուղապետի և գյուղապետարանի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, որոնց էլ փորձում ենք լուծում տալ մարզպետի անմիջական աջակցությամբ:

Համայնքի ղեկավար՝ Արմավիր / Ն. Հայրապետյան
(ստորագրություն)

